

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՒՐՈՊԱՅԻ ԼՈՒՍՈՒՈՐՈՒՔԵԱՆ.

Ա. ՏԱՐԻՆ. ՅԻՆ 4. Լուսաւորի ամբար եղիւ յԱրցաւ ծառիկանի խոն Ժամիկ Է: Կոնստանդնուպոլիս. — Քարիշ, Արցալ Քոստանդնուպոլիս, 13, rue de Fleury. 1890 յի յոգնար 1.5
— Գլխի, Արցալ Օսման. — Իզմիր, Արցալ Ալիսուլան, — Ելիզաւէ, Արցալ Տե. Կոստանդնուպոլիս ինքնով:

ԻՆՉ ԿՐԼԼԱՅ ԵՂԵՐ.

Նրէր հոյ նստեր Էն զարդարան սննկակի մը մէջ
և իրարու նկրնակ կերպարանք մը կը յայտնեն: Նրիւ
երկասարդ անուներու միայն ամբողջութեամբ և հաստ-
կաւոր անձ մը բարձրագոյն խորշը բազում իրարու
կը նային խոսքերիւ աչերով: Նրիստատրոնիւն
մէկը զանգրակէր և սիրուն գոյի մ'ունի և տեսնողը
չկարծէր թէ արեւելցի է: Միւսը նշանաւոր բան մը
չյայտնէր երեսին միայն, բայց իր նախագրաւ կաշու-
ձիւնը և սրտը շարժումները խոսակցութեան ստուեր մը
կուտան իրեն որ բառական սպասմ կ'ընէ երկարակի
միայն: Ասիկա ձեր և չոր մարդ մ'է սպասակ մտղերով,
այնք մօրաքով, կապիկի հակառակ և սրճիկի քիթով:
Դրեմէ յիսուն տարեկան կոյ և սոյնուն նախաճառ
կեանք մը և միին սովորութիւններ ունի որ շատերը
կատար կ'անուանեն զինքը հեղինակեալք: Կարծեալ Օէ
իր բոլոր էութիւնը ազրով շարժակ և սնկար տարակա-
նութեամբ անէր է: Այն սիրտ ունի, ոչ տրիւն և ոչ
փոքր եռանդ մը բարեք ընելու համար, բայց այնպիսի
կեցմանորութիւն գիտէ իր վրայ ծաւալի որ նոյնը
կը խարտի և ստարքնութեան ու ողորմութեան
վերջագիր մը ստուլ սրտաւորութեամբ և անոր: Կ'ըստի
ձէ Ակնիկի և և Ժամանակով վարժապետ եղեր է: Աս-
տուած գիտէ ինչ բանի: Ինչ գիտէ երեւելի մարդու
անդ գիտէ իր շուրթի նկա չափակէն հոտ, սոցային
իրերու կը խառնուի, մեծ մեծ խրատներ կուտայ սրտ-
քին հորը փոքրիկ կոտ անունը կըրծանելու համար: Աճ-
տուի նաեւ թէ... այն ինչէր չ'ըստի անոր վրայ որ մէր
ամէն լուծը յիշէր մի աս մի:

Այս Երեք հոգիներ բանի մը բողէ իրարու հետ խօսե-
լէ հոտ, ստատուայ ծերը կը տեսնէ որ գիմայինները հա-
տարակ մարդիկ չ'են և կ'աշխատի իր բնական վարդե-
տանեան վրայ բանի մը չիմտ: Ղէնրեր աւելցրնէ
որպէս զի իր համբար չ'արտաի: Աղպոյ որ անոնց
հետ ոչ գիտածին, ոչ վիճակաւորութիւն և ոչ կրա-
նախորութիւն կրնայ ծախել ինչպէս իր սովորութիւնն
է: Աստի շատով աչքը մէջ մը գէտ ի հայեիկի կը զար-
ձնէ, շարժերը կը լլէ, կը կնէ, մեքով փէտը կը շարժէ,
մօրաքը շայն, հակառակ մատերով կը շարժէ իր թէ իր
փառն զինի խօսքի պաշտպ: մը պարտ նսնէ ուղէ և

անոն իրենի միայն բարձրակի կ'աղարկեալի և տե-
րմանի մէջ մը կ'անտու: ոչանքն սրտայիր մօլիտ մը
շարժերու միայն կը գնէ, ինքին ծայրը մէկը կը բոէ
պահպան նեղնութեան ստուեր մը կուտայ, աչերուն
բարձրակի անտարքէր քօլով մը կը նկարէ և մէկէն
փառնը կ'սկսին հակառակ միայն ու ազգ կ'անուն որ
իր սրտը գոտար խորնարդներու նմանակ է: Այս
ընէ կ'անտու մէկով կը գտնուայ հայկիին կողմը
ինչ նախաճառն կուտայ իր դէմքին, գիմքը Մեծերիկ
մը կը կարծէ և խօսքը կը շարժանակութեամբ: Յայտնի
է որ սրտայիր մը հասարակ մարդու համարժէ՛ երբէր
խօսք մը չկարէր հեռուէր: Մերմէ ինչ բան է չ'իյտէ: Կը
հաւանի իր կարծեալ Օէ կ'ընդգրկի: Կը լլէ կը պա-
տուաւան մը կը յաւատ, կը խօսի երբ պայտին մերթ
սայ կ'աշխատի: Կը հարցնէ երբ պատուաւան մը կը
խնդրէ: Հարցական կեանք ժամանակ իր սրտին է:
անով կը շարժի, կը յորձակի, կը պաշտպէ, կը չփառէ,
կը յարձէ: Ոչիւն գիմք բնաւ չ'իրէր և կոր շարժե-
րու բարձրակը կը զեղիլի միշտ: անտու զրաւուն մ'ունի
որ խնդրի մը վրայ նշոյ մը ջողար և ամէն բան
մտնի մէջ կ'ընդգրկէ: Իր նկարագիրն է: « Երեսն կը
ժառայէ միայն ծառիկու յարմար » և բիւնէն հշար-
տութիւն մը հանել յանցանք կը սեպէ:

Յեղարձ երկասարդները տաւ ամէնը չ'են գիտեր և
հոգի: Թէ կրնան երեւակայել որ այս անտու մարդ
մը կը գտնուի աղջկան մէջ: Աստի կ'սկսին միամտա-
բար իրենց աչքերուն հոտաւոր յայտնել և կաշխա-
տին բարեկամի մը իրաւունքը պաշտպանել: Նախ
աղպոյին միմակի միայն կը խօսին, և ձերանի հոյք
մարտնէ կամ Բէրիկէ եկող անձանցով պէս չ'գիտեալ
կը դարձէ և կոյսի համակարգութիւն մը յայց կուտայ:
« Ինչ կ'ըլլայ եղիւ: »

Երկու երկասարդները շարժ կ'ընեն խնդրիկի դար-
չ'ենէլ, պարզ և ամբարի կերպով եղելութեան յայտնել՝
այն տրտմալի միմակին էտիւն պատճառը երեսն
հոտնէ և պատուաւանաւորութիւնը հշարտիս յանցաւ-
րին վրայ ծոյսու: Մերթիկէն հոյք աղպոյ սր, կ'ընէ
անիկա անտարքեր ճայնով: « Ինչ կ'ըլլայ եղիւ: »

Սակայն երբ այս միմակին մէջ բանի մը անտու կը

նահատակութիւն, կը կրկնեն երիտասարդները, և երբ վատ կ'իրքերու շունչը կամ ծագուն շահասիրտութեան տէնչը պատճառ կ'ըլլան անոր, միթէ մարդկութիւնը չ'պահանջէր որ... Անմեղին լիկումը շատ անգամ հարկաւոր է, կ'ըսէ ձերը անոնց խօսքը ընդմիջելով. « Ինչ կ'ըլլայ եղեր : »

Այս եղբիւն (1) յօդուածներէն մէկը կը յիշուի, աղատութեան բողոքի պէս բանաձեւ կը լսուի սենեակին մէջ : Երկդիմի հայը զլուխը կ'օրօրէ, կը ժպտի և վայրկեան մը միտ դնելէ ետեւ կը պատասխանէ հազիւ թէ շուրթերը շարժելով. « Ինչ կ'ըլլայ եղեր : »

Միտքի արտօնութիւնը, խորհելու աղատութիւնը կը պաշտպանեն երիտասարդները և քիչ մը յօդուելով կը համարձակին հայ ձեռքով հիւստած գերութեան շղթան ցնցել ու բողոքել : Անարիւն հայը իր այծի մօրուրը կը շարժէ, զլուխը կը դարձնէ և այսպիսի նշանակաւն կ'երպով ձեռքէս ի հակառակ կը տանի որ կուղէ ըսել . զլուխ մի ցաւցնէր. « Ինչ կ'ըլլայ եղեր : »

Փանի մը բոսէ լուծիւնէ ետեւ, պատիւ բառը երիտասարդներու մէկին բերնէն կ'ելնէ : Սուտ տրելումը նորէն կը ժպտի և անկարելի հեղնութեամբ անոնց երեսը կը նայի միտքէն ըսելով. ինչ գոռութեան արժանի է որ պատույ կը հաւատանդեա : Ուրիշ կուգան ասոնք որ պատիւ կը բնտեն ասիականի մը քով... պատիւին քաջիւն... « Ինչ կ'ըլլայ եղեր : »

Պարապ աեղը կրօնական ոգին զրգուկ ազգին մէծ վնաս կուտայ, կ'ըսէ նորէն հանգարտ երիտասարդը. ժամանակը եկաւ որ այս ամէնը դադրի և միտքերը բռնին այս հիւանդութիւնէն : Այլ կարծէք, պատասխան կուտայ այծի մօրուրը հեգնելով, բայց եթէ այս ոգին չզրգուի անտարաբերութիւնը չ'զար և ամէն կրօնական սկզբունքը չ'քանդէր : Այլ հաւանիք որ զրգիւրը կ'ընայերբն չափէ դուրս ելնէ : Բայց « Ինչ կ'ըլլայ եղեր : »

Սակայն երոստայի լուսաւորութիւնը, կը կրկնէ միւս երիտասարդը, պատմութիւնով և սուօրեայ փորձերով կը հաստատէ որ աղատութիւնը կրօնքին զոհէ, միտքը բռնաւոր կամքին ներքեւ ծողով, իրաւունքը անգոյնել ազգի մը խաւարում կուտան : Իրաւ. կը հաւանք թէ արդարեւ այնպէս է, կը պատասխանէ ասուն կապիկը. և ձեզի չափ պատմութիւն և փիլիսոփայութիւն չ'եմ զիտեր, բայց լսեր եմ որ ամէն խաւարումէն ետեւ լոյս կը ծագի : « Ինչ կ'ըլլայ եղեր » ուրեմն եթէ...

Երկար չ'ընենք անարժան հայը երիտասարդներու ամէն խօսքին այս պատասխանը կուտայ և լսին կը փոխաւորուի իր նստած աեղը : Արդարութիւն, պատիւ, լուսաւորութիւն ամէն բան կը հեգնէ անիկա ընտ հոն չ'ըլլալով : Այս ամէնը խաղալիկ մը կ'երեւի

իրեն, տեսակ մը պէպէկներու տեղ կը դնէ դանոնք և ուզածին պէս կը հագնեցնէ, կը սգեցնէ միտքը բերելով երեւելի կիներ մը խօսքերը. « առաքինութիւնները զգեստներու նման մօտանկր ունին, ուստի ներելի է կարծել թէ արտաքին դարգէ ուրիշ բան չ'են : »

Միամիտ երիտասարդները տեսնելով որ ինչ և ըսեն ունայն է և ամէն առաջարկութիւն « ինչ կ'ըլլայով մը » կը վերջանայ, կը լսեն, կը զանին, խոնարհելով դուրս կ'ելնեն և անգառնալի կերպով կը հեռանան այն սենեակէ : Այլ բոլորով մը քսուէի, կ'ըսէ երկուքէն մէկը իր ընկերին, կարելի է որ աւելի նուազ սոսկում գայի : Այս կերպով և այս գրութիւնով ամէն բարոյական, ամէն օրէնք կը վերնան աշխարհի և չկայ անցեալ վատութիւն մը և ապագայ ոճիր մը որ կատարելապէս չարարանան : Կայենէն սկսելով մինչեւ Վերմէ ամէն անօրէն իրաւունք մը կ'ընայ առաջ բերել և սրբովի : Արդարեւ հիմա կ'իմանամ թէ ինչ ըսել կ'ուզէր բարեկամներէն մէկը, երբ կը զրէր ինձի : « Տեսակ մը մարդիկ կան որք բարոյականի ամէն տեսիլներէ հեռու, ամէն բարի զգայութիւնէ դատարկ, ամէն առաքինութեան ծնամի, ամէն գաւանանքէ դուրի, մարդութեան կեղեւ միայն ունին և իրենց ներսը ժահաբոյր ասակաւ նստելով մը կը վիտայ : Վիտութիւնը անոնց համար զործի մ'է, զրազխտութիւնը՝ շղար, փիլիսոփայութիւնը՝ խայծ և կրօնքը զիմակ մը : Փիլիսոփայ տգէտներու առջեւ, կրօնաւոր պարզերու հետ, զխտում ուր նշող մը չտեսնուիր և զրազեւ ուր այբուբենի տեղեակ մը չը կայ, երկրային պատիւ մ'են անոնք մարդկային ազգի համար : Գիշերը քուն մոռնել վատ հնարքներ մտղէ անցնելով, յանկոյնի տապալիլ անոնց ամէնէն ազգուն ըմբռնելու համար, քիչ մը խորհալ և ետքը, երաղի մէջ, այն հնարքները փորձել, առտու ելնել, վայրկեան մը յօրանջել թուրաւ, բայց շուտով լաթերու հետ երկիւյնայ վատ ոգին զգենուլ, դարան լարել և բոլոր օրը աշխատիլ հոն անմեղ մը ձգելու, ծածուկ աեղ մը ամփոփուիլ, լսին սպասել, ափ ափի շփել անմեղին հաւաճը լսելով, ուտել, խմել, վայելել և նորէն իբրեւ գոռնալ հեշտութեան հետ զիրկընդիւստան, անա անոնց բոլոր զբաղումը : Իրենց վայրաքար իւրեանքի մէջ մէկ բանի կը հաւատան անոնք, ստատմութեան (habileté), և ամէն շերտ եռանդով կը պաշտեն անոր կուրքը : Այն էակը ճշմարիտ մարդ է որ ստատմութիւն մը ունի և զիտէ յաջողակօրէն զայն զործածել մեծ կամ փոքր պարագաներու մէջ : Ստատմութիւնէ ուրիշ զօրութիւն չկայ այս տեսակ մարդերու համար ուրիշներու հետ վարուելու առեւ : Առաքինութիւնը անուն մ'է միայն, իրաւունքը՝ ուրաւակամ մը, պտուիւր՝ անհիմն երեւոյթ մը և մարդկութիւնը՝ անբան հօտ մը ստատմութեան համար հաստատութեան անոր ճարակը լալու համար աշխարհ եկած... »

« Ինչ կ'ըլլայ եղեր » կը պատասխանէ միւս երիտա-

(1) Հայ ժեղութիւններու մասնութեամբ խափանուած :

սարկը տրտում հեղուկեամբ և կը հետանայ իր ընկերէն վախճալով այսպիսի աստիճանութիւնէն ծագած վիճին խորութիւնը քննել:

« Ինչ կ'ըլլայ եղեր » թող բոլոր աղզը բնութէ այս խօսքերուն հետեանքը: Մեղի համար ասկէ ամբարիշտ և ժանտ դրութիւն չ'ենք հանձնար երկրի վրայ, վասն զի հոն կը սքօղի աստիճանութիւնը որ աղզութեան անաջին ծշումին է:

« Ինչ կ'ըլլայ եղեր »... Ինչ պիտի ըլլայ, ո՞ր ներկալ սիրտ: Ամէն մարդ քեզի պէս բարոյական հրէշ մը կը ձեւանայ, նոր ժողովուրդ մը կ'սկսի և զքեզ նոր նախահայր կ'ընենք ի փառս Հայկեան նոր սերունդի:

ՀԱՅ ԴԻԴՍԱԶՆՈՒՀԻ ՄԷ

(Շարունակութիւն ևս վերջ. Տես թիւ 5, էջ 21.)

Օրիորդին հայրը անոր սիրտը տմբեղու միտքով իր և ուրիշ ընտանիքները կ'առնու հետը, բազմութեամբ կը ներկայութի գծութիւն խնդրելով ամենուն համար: Հիւսէյին խանը օրիորդին հրաշայի գեղութիւնը կը տեսնէ, մէկէն կը յափշտակուի և այնպէս ներշնչուի կիրքով մը կը զրաւուի որ ամէն բան կը մոռնայ ու առ երես կը մեղմի կարծելով թէ այս գծութեան փոխարէն օրիորդին հայրը պատրաստ է զանիկա իր կամքին դռնէ: Բայց իր յոյսը ի դերն կ'ենէ: Բոլոր ընտանիքը մեծէն մինչ փոքրը վեհ զայրուցով մը կը զրգուի այս իշխանին նախատինքնէն, և անոնք որ քիչ մը առաջ կորսնցածն էին կ'աղերսէին, կը կանգնին և առիթ ծաղկման կարգարար մը կը զգենուն անոր առջև: Հիւսէյին խանը կարգէ դուրս կը բորբոքի այս ընդդիմութիւնէն և սպառնալիքէն բռնութեան անցնելով հրաման կուտայ որ ընտանիքին հայրը բանտ դրուի: Այլ շատ չ'երթար կը համոզուի որ բռնութիւնը վստահաւոր բան է այս պարագայի մէջ, բերանը կը փակէ, նորէն կը մեղմի և գծութեան կերպեր առնելով իր առջև բերել կուտայ զանիկա և կարճակէ յաղատութիւն: Սակայն իր մոլի կիրքը երծալով կը սաստկանայ և սիրտը օրէ օր անուսելի մաշուցով մը տառապի: Քանի մը ատեն մոլեգնաբար այս կողմերը ծափառելէն ետքը կրկին կը դառնայ Երևան և կ'սկսի համբայ մը բնուել օրիորդը հափափելու և իր սիրամոլ կամքը կատարելու համար: Շատ չ'անցնիր սրտեհ առիթ մը կը հանդիպի և երեք հաւատարիմ սպասաւորք իր փափագը կը լեցնեն: Անմեղ օրիորդը բանտ կը բերուի գիշերայն և իր հրամանով ծագուն տեղ մը կը դրուի: Հիւսէյին խանը կ'սկսի այն ատեն անաշ կերպերով անոր կրօնական համոզումը խախտել և մահմեական ընկուռ աշխատիլ: Զուր ջան

և անհիմն ակնկալութիւն: Հայկազն զիւցադնունին Մահմէտի անունէն միայն կը սարսի, անյաղճելի նողկում մը կ'զգայ և մեռնիլ աչք կ'առնու: Սիրահար պարսիկը օրերով աշխատելէն ետքը կը տեսնէ թէ այս կրօնական ոգին անընկճելի է օրիորդին սիրտի մէջ և առելի նիւթահան զէնքերով կ'ուզէ պաշարել իր գերին: Բայց այս զէնքերն ալ կ'աղղեն և ոչ բնաւ այն զիւցադն տրամէնունին: Փառք կը խոստանայ անոր, զանձ կը նուիրէ, հարստութիւն, վայելք, երանութիւն կ'առնէ: Բայց քիչ է փառք ճշմարիտ քրիստոնէութիւնի մը համար եթէ ոչ անարատ հարստութիւն անմահ փեսային հետ: Ինչ էն զանձ և հարստութիւն չէն հիւզի մը մէջ ապրող առաքինի որտի մ'առջեւ: Ինչ է երանութիւն երկնային սիրով յափշտակուած հոգիի մը համար որ մաքրութեան մէջ սովորէ և դայն բնութի իր Եկեղեցւոյ բակը: Օրիորդին քնքուշ սիրտը, որ ճշմարիտ սիրոյ նայուածքին չ'էր զիմանար, այն ատեն անզգայ քարի պէս կը մնար հոն, ամէն խոստում ոտքի տակ կ'առնուր և արհամարհանքի վսեմ գէմը մը իր ներսի արիւթիւնը կը յայտնէր: Նորէն սպառնալիք Հիւսէյին խանի կողմէն, կրկին անվախ ընդդիմութիւն զիւցադնունին հայսն կողմէ: Վայրկեան մը դուր և զաղար. վերստին պարզ և անհատնուած խոստումն, աղերսներ սիրահար մոլին բերնէն: Միշտ արհամարհութիւն և մերժում օրիորդին քով: Վստ մահ կամ աղատութիւն կը գոչէր անարար անիկա. ոչ մահ և ոչ աղատութիւն կը պատասխանէր Հիւսէյինը այլ յայլմէ: Կտաքս կոտորէ հիմա, եթէ ոչ յարատեւ բանտ քեզի: Այս սրտա թունդ վիճակը կը տեսնէ քանի մը օր, բայց փոփոխութիւն չ'տեսնուի օրիորդին վրայ: Վերջապէս ասիկա մահը աչքը կ'առնու և կը պատրաստուի նախատինքնէն և գերութիւնէն աղատելու հար մը գտնել: Հիւսէյին խանը անոր միտքը կ'իմանայ ժամանակ կ'ուզէ շահիլ, երևան պաղիլ մը կը յայտնէ: Մէկ քանի օր չ'երկր և հրաման կ'ընէ որ հաց և ջուրէն դուրս ուրիշ կերակուր մը չ'առուի իր գերին: Այս ալ չ'աղղէր, և երբ, շաբաթէ մը ետքը, նիհար և ծաւալ կը տեսնէ այն վարդի նման գեղեցկութիւնը՝ կը դարձի, կը տրտմի, սիրտը կը սեղմի, վասն զի իր կիրքը այսպիսի վեհ ընդդիմութեան առջև բորբոքէր, մաքրուէր և զրեծէ խէր փոխուէր էր: Ուստի ծոգութիւն իրերան կը մօտենայ այնուհետեւ օրիորդին և իր սիրտին դառն, աղեկէզ վիշտը յայտնելով կ'աշխատի համոզել զանիկա: Սրմենունին ոչ կը մեղմի և ոչ կը թուլնայ: Եւ գիտէ որ այն բռնութիւնը, որու ներքեւ ինք կը ընդունի, չ'իմար ճշմարիտ սէրէ առաջ գալ, ուստի անզաղար իր աղատութիւնը կը խնդրէ: Եթէ յիշատի զիս սիրէիր, կը կրկնէ միշտ, միթէ այս բանտի մէջ, այսպիսի զարշտեղ մը կը պահէիք, միթէ այսքան բռնութիւն ի գործ կը դնէիք: Բն, ուր աղատութիւն չ'իյայ սէր չ'իմար ըլլալ աղատութիւն տուէք ինձի և ետքը կը տեսնեմ եթէ ար-

ժանի էք՝ ոչ իմ սիրոյ, վասն զի այն ուրիշի մը նուիրեալ է, այլ իմ հոս հակրութեան զոր Հեմ մերժեր և թէ հաճիր ազատ թողուլ զիս : Հիւսէյին խանը ահանջ չղնէր այս խօսքերուն և բռնան կիրքէն ալեկոծ՝ կը շարունակէ ամէն օր մէջմէկ դարան և սուտ հնարել իր ճարտարակին հասնելու համար : Այնքան ապուշ չ'էր որ չղգար թէ անոր ազատութիւն տալ, դանդիկա յաւիտեան կորուստն էր : Ուստի միտքը կը դնէ անմեղ օրիորդին քերականը սպաննել տալ և այս կերպով անոր սիրալիր յոյսը պարապի հանել : Այս անգամ խորհուրդը կատարելու համար իր երկու սպասաւորներու հրաման կ'ընէ որ դանդիկա ուր և գտնեն Հիւսէյին և ինքը յառաջմէ մահաւան լուրը տանելու կ'երթայ օրիորդին քով : Ասիկա Կըհաւաւայ, կը խաբուի, արտասուք կը թափէ, կը արամի և այնքան յուսաբեկ վիճակի մը մէջ կ'իյնայ որ միտքը Կը դնէ նոյն զիշերը ինքնամահ ելնել այս աշխարհէ : Ինչ ատեն արի օրիորդը այս որոշումը կատարելու զիւրին ճամբայ մը կը բնութէ միտքին մէջ, բոլոր զեղը ոտքի կ'ելնէ, կը յուզի իր բանտարգելութեան լուրը տանելով : Մօտակայ գեղերու մէջն ալ կը տարածուի այն և կարգէ դուրս շփոթ կը պատճառէ : Ամէն մարդ կը սրտմտի, ամէն սիրտ վրիժառու ոգի մը կ'զգնուի և ամէն ծն կը զինուի համարին նահատակութիւնը բռնաւոր խանին ձեռքէն ազատելու համար : Իր սիրականը մահաւանդ վսեմ բարկութեամբ կը բորբոքի, քանի մը քաշերու հետ դաշնադիր կ'ըլլայ և կը պատրաստուի մէկէն իր սիրունին ազատել անկէ կամ անոր քով մեռնիլ հոն : Այս գիտաւորութիւնով զիշերը կ'սպասադիտուի իր համակամներու հետ, կուգայ, կը հասնի բերդին առջև և կ'սկսի երգելով և սուլելով նշան տալ ու հասկնալ թէ որ կողմը կը գտնուի զիւցաղնունին : Հայկեան զուարթը այն ժամու մէջ արտում կը հսկէր և իր մահաբեր կամքը ի գործ դնելու վրայ էր, երբ մէկէն ձայն մը կ'առնու, սրտածուկ կը կանգնի, ահանջ կը դնէ և լինչ լսէ... իր սիրականին ձայնը : Նրկնային ձայն մ'է այս իրեն համար որ մէկ բողբէլի մէջ ոգի կուտայ իր սիրտին : Աը քաջալիրուի, վեր կ'ուստէ առնաբար և ամէն վտանգ մոռնալով բերդին պատուհանը կը բանայ... Ո՛հ ինչ սոսկալի վրիճ կը բաժնէր զինքը իր սիրականէն : Բայց կայ արդեօք վրիճ մը այնքան ընդարձակ որ երկու սիրալոյ սիրաւեր իրարու միանալուն արգելք ըլլայ : Թրամ, փոս, բարձրութիւն, հեռաւորութիւն ինչ էն այն աչքին համար որ սիրոյ զէմբը կը նշմարէ և որուն այս տեսքը ամէն բան մոռնալ կուտայ : Յանկարծ պատուհանին վրայ կ'ելնէ, բոլորակը կը նայի, կ'ամփոփուի և սուլածօրէն կը նետուի վար, թեւ տարածէ սէր գոչելով... Վրկնայ զիւցաղնունին չոր հողին վրայ կը վիրաւորուի մէկ երկու կողմէն, կը զլորի արիւնածածու և կը հաշմի կը մնայ հոն : Ազգային քաշերը կը տեսնեն անոր անկումը, կը լսեն անոր մնչիւնը և կը

վաղէն կուգան, բայց ինչ ատեն դանդիկա վերցնելով փախչելու կ'աշխատին՝ պարսիկ պահապանները վրայ կը հասնին և սաստիկ կռիւ մը կ'սկսի երկու կողմէն : Թուրքերը կը շողան մոռնին մէջ, աշիւնը կը հոսի և խառն շփոթ մը սիրտերը կը զրգռէ : Օրիորդին սիրականը երկու վէրք կ'առնու և իր սիրունիէն քիչ մը հեռու կ'իյնայ կիսամեռ : Իվերքէ յաղթութիւնը կը մնայ պահապաններու քով որք մէկ քանի հոգի կը բռնեն և վիրաւորներուն հետ բանաւ կը տանին դանոնք : Հետեւեալ առտու Հիւսէյին խանը այս զէպքը կ'իմանայ և գեղանի օրիորդին արիւնքինը այնքան ազդու տպաւորութիւն կ'ընէ իր վրայ որ կը ներէ և ազատութիւն կը ջնորհէ անոր : Այնքան իրաւ է որ ամէնէն վատ մարդու սիրտին մէջ խորշ մը կայ միշտ զոր բնական օրէնքը զերծ կը պահէ ապականութիւնէն... : Այս ըստ ազնիւ օտարականը և սկսաւ հայ երիտասարդին երեսը նայիլ իրբժէ ըսել ուղեւոր մանոր. « կը տեսնէք որ իրաւունք չունիք յուսահատիլ և մարդերը գարշդեռուն մը սեպել միշտ » : Անգղիացի օրիորդը արդէն Վալթերսթրոմին վէպը մոռցեր էր և դմայլուն զէմբով միտ կը դնէր այս պատմութեան : Իր սիրուն կերպարանքը անասնիի դուարթութեամբ մը կը փառաւորուէր և լսելեայն կ'ուղեր ըսել իրկողմէն. « Ահա ճշմարիտ սէր, ահա ճշմարիտ սիրական. ամէն օրիորդ այսպէս ըլլալու էր » : Հայազգին ալ քիչ մը հարտաւորութեամբ կ'ուրախանար համատեւ գտնուելով Նրեւան զիւցաղնունին և կ'աշխատէր իր միտքին վարանքը փարատել : « Վարելի է որ սխալիմ, ըսաւ անդիկա մէկ քանի բողբէն. մարդ զաղտնիք մ'է և կեանքիս պարագաները միշտ չ'են օգնէր լաւ դատելու : Բնկերական վիճակը... »

— Ո՛հ. Բուսոյին կարծիքները հինցան, կրկնեց անգղիացին հեզնելով մը. և թէ վատութիւնը կուտայ անյուսութիւն, արիւնքինը պէտքէ որ տայ փտահոտութիւն :

— Ինչ և է կարգէ դուրս ջնորհակալ եմ ձեր ըրած պատմութիւնէն և հաւատարի եղիք որ ասիէ աւելի ուրախութիւն չ'էիք կրնար տալ ինձի » :

Քառորդի մը չափ ևս այս նիւթի վրայ խօսակցելէ հորը, Անգղիացիք վար իջան և հայ երիտասարդը սկսաւ ճեմել մինակ յարկին վրայ : Օրիորդին զէպքը, հայրենական կարօտութիւնը, իր մահաւորեան յիշատակը կը վրդովէին զինքը և նոր աշխոյժ մը կուտային : Ան ժամանակը լաւ մը խմացաւ հետագայ ոտանաւորին միտքը զոր կը յիշէր և որու հեղինակին անունը անգամ մոռցեր էր :

Ձծով չափէ թող զխոտն.

Ձերկին զիտէ խմաստուն.

Թող սիրաբեկ սիրտ դատարկ

Փրփրներու վրայ ակնարկ

Անյոյս հալի և գոչէ

Թէ կեանք մեր այս ոչինչ է :

Թող մարմնասէր լի տհով
Տառամանի վտանգով.

Թող անզգայ ստույիկեան
Տեղաւորուի իր արձան :

Ես ձեր սիրով հայրենիք,
Բարեկամներ, ընտանիք
Յաւիշտակեալ կը մոռնամ
Ալիք, անդունդ, մահ անգամ :

Զոր այս տախտակ որու վրայ
Զայս երգ գրեմ ես հիմա
Անասելի հեշտութեան
Տեղ կ'երեւայ յայս վայրկեան :

Հայրենիքի դաշտ և սար
Երկինք կապոյտ, արեւ վառ
Հոն կը տեսնեմ. և անդէն
Կը համոզուիմ թէ անդ էն
Եւ կեանք և սէր ճշմարիտ
Ի՞նչ քանութեան մարգարիտ :
Հեռի անկէ մարդ ունայն
Կը թափառի յերկիր լայն
Բարօրութիւն խնդրելով.
Բայց կը գտնէ վիշտի բով :

Ո՛ հայրենիք ի քո յաւ
Հով մը կ'զգամ շատ անուշ,
Եւ մանկութիւն իմ տհա
Մաղիկներով կ'երեւայ :
Կ'առնոյ զանամ և ոգի
Կ'առնում շունչէդ կառնով :
Փռած շողի, հով շարժէ
Ժամ մը առաջ գանձ կ'արժէ
Համիլ, ըսել « քեզ բարեւ
Հող որ աւելի ինձ արեւ » :

ՍՈՒԷՉԻ ՊԱՐԱՆՈՅՐ.

Ամէն մարդգիտէ որ ժամանակէ մը ի վեր առաջադրուածին մը կայ Սուէդի պարանոցը բանալու և նոր ճամբայ մը շինելու նաւարկութեան համար : Ֆէրտինան տը Լէսէբսը իր վրայ առած է այս մեծ գործը և արգելք մը չկայ որու առջեւ ընկրկի : Կ'ըսուի թէ իր շանքը յաջողութեամբ կը սլակուի և շատ չ'երթար նիւթական աշխատութիւնը պիտի սկսի այն ամայի վայրերը շինեցնելու : Ահա կարճ տեղեկութիւն մը այս նիւթին վրայ : Ֆէրտինան տը Լէսէբսին ղրտաւորութիւնն է Կարմիր ծովը Միջերկրական ծովին հետ հաղորդել ծովային ագուգայով մը որ պիտի երթայ Սուէդէն մինչեւ Բելիզ : Ագուգան պիտի ունենայ ուժսուն կամ հարկար մէծը

լայնութիւն և ուժ կամ տասը մէծը խորութիւն, հետեւապէս ամէնէն մեծ նաւերը պիտի կրնան երթել իրեն :

Զկարծէ մէկը թէ այս առաջին անգամ է որ երեւելի մարդիկ կ'ուզեն այսպիսի հսկայ շէնքի մը ձեռք դարնել : Եզիպտոսի հին թագաւորները արդէն ագուգայ մը շինել տուեր էին որ Կարմիր ծովը Նիլ գետին կը հաղորդէր և որու աւերակները մինչև այսօր կը տեսնուին հողին երեսը : Հերօթոս ահանատես կը պատմէ որ այս կերպով մեծ երթեւեկութիւն կ'ըլլար այն ագուգային վրայ որ կ'սկսէր Պապիւսածէն, դէս ի արեւմուտը կ'ուղղէր, ետքը հարաւային կողմը կը գտնար և կը վերջանար ի Բաթրմոս, Կարմիր ծովուն եզերքը : Սօրապօն նոյնը կը հաստատէ և աւելի ճիշդ տեղեկութիւններ կուտայ անոր վրայ : Հսովմայեցի կայսրերն ալ ետքը շատ հոգ ունեցան այս ծովային անցքը կատարելագործելու : Առաջին Փալիֆաները եւ նոյն փոքր իգործ գրին, բայց վերջինները անհոգութիւն ըրին և ինչերորդ դարուն սկիզբները խանգարումը սկսաւ և ամէն նաւարկութիւն դադրեցաւ : Եզիպտոսի արշաւանքին ատեն Ֆրանսայի առաջին հանրապետութիւնը հրաման տուած էր Պօնաբարդ զօրավարին (Նաբօլէօն Ա.) որ Սուէդի պարանոցը ճեղքելու աշխատի : Ասիկա հոն հասածին պէս անձամբ փորձեր ըրաւ և քաջալերուելով միտքը դրաւ Փարաւօններու շէնքը նորէն սկսիլ : Իր հետը բաղմաթիւ զիտուններ կային, ամէնքը տեսան և քննեցին այս մեծ առաջարկութիւնը ու պարոն Լըբէր ճարտարին յանձնեցին որ յիշատագիր մը շինէ, աւանդութիւնները ժողովէ, փորձեր ընէ և իր տէրութեան գրկէ դանոնք : Այս շատ դիւրին չէր պատերազմի շփոթին պատճառով, սակայն պարոն Լըբէր հմտութեամբ ամէն բան զննեց և իր յիշատակագիրը մինչև այսօր յարգ ունի գիտուններու առջեւ : Այն ատեն կը կարծէին թէ Կարմիր ծովը 9¹,908 աւելի բարձրութիւն ունի Միջերկրական ծովին հարթութիւնէն (niveau) : Ուստի Լըբէրը համոզուած էր որ Սուէդի եզերքը խորշ մը հաստատել անհնարին էր : Կը կարծէր նաեւ թէ Բելիզի կողմը նաւահանգիստ շինել անյաղթելի արգելքներու տեղի պիտի տայ, անոր համար թէ ինք և թէ իր տէրութեան զիտուն անձինք կ'ուզէին վաղէմի ագուգան նորոգել կամ անոր համար շինել : Այսօր արեւու պէս յայտնի է որ այս կարծիքը հիմն չ'ունի և երկու ծովերու հարթութիւնը գրեթէ մի և նոյն է :

Մէհմէտ Ալի բաշան ալ այս գործին ձեռք դարնել ուզեց, բայց որովհետեւ միշտ հին ագուգային խօսքը կ'ըլլար իր առջեւ, դանց ըրաւ վախճալով որ Կարմիր ծովու և Նիլին հաղորդութիւնը իր տէրութիւնը վտանգի մէջ ձգէ ծովային դօրութեան մը կողմէ : Մէհմէտ Ալի բաշային այս կարծիքը բոլորովին անհիմն չ'է և իր կասկածոտ հետաւետութիւնը իրաւունք ունէր այն ժամանակ :

Վերջապէս ֆէրտինամ տը Լէսէրսը վաղէմի շաւղը մէկդի ձգելով՝ ուղեց ցամաքէն ուղղակի համարայ բանալի իրիւ ծովերը միացնելու համար, բայց իր կամքին վրայ չվստահանալով տիեզերական ընկերութիւն մը ընկնց և Եւրոպայի ամէն ազգերէն փորձառու և գիտուն անձեր ժողովելով Նգիպտոս գնաց : Երկար և մանրամասն զննութիւններէ ետքը, ինքը և իրեն համակամ գիտնականները տեսան որ այս երեւելի գործը անյաղածելի դժուարութիւններու էնթակաց չ'է և մեր գարը ամէն միջոց ունի զանոնք բառնալու : Ուստի ամէնքը միակամ Նգիպտոսի փոխաբքային յիշատակազիր մը տուն որու մէջ բոլոր տեղեկութիւնները ամփոփելէն ետեւ կը յաւելցնէին. « Սուէդի խնդիրը լուծելու և Վարմիր ու Միշերկրական ծովը իրարու հաղորդելու համար, ուղղակի ազուգայ մը պէտք է Սիւէդէն դէպ ի Բէլիւզ : Այս ծովային անցքի կոտորումը դիւրին է և յաջողութեամբ ամէն ապահովութեամբ կրնայ հաստատուիլ : Սուէդի և Բէլիւզի շինուելու երկու նաւահանգիստները հասարակ դժուարութիւնէ ուրիշ բան չ'էն յայտնէր. Սիւէդինը լայն և ապահով խորշի մէջ պիտի հիմնուի ար 8 մէթրը ջուր և 1,600 մէթրը ծովեզր կը գտնուին. Բէլիւզինը Ում-Փարէկ և Ում-Վէմիլէ ջուրի բերաններու մէջ պիտի գրուի, որ 8 Լն մինչև 2,500 մէթրը ջուր կայ... : Վերջապէս բոլոր ծախքը երկու հարիւր միլիոն ֆրանքէ աւելի չպիտի ըլլայ : »

Ֆէրտինամ տը Լէսէրսին առաջարկութիւնը ոչ միայն մեծ համակրութիւն այլ և քաջաշնորհութիւն և գովեստ զտաւ Թէ Նգիպտոսի ու Թէ Եւրոպայի մէջ : Արդէն վերոյիշեալ ահագին գումարը պատրաստ է և պիտի գործածուի տասնէիններորդ դարուն և մարդկութեան փառքին համար : Այսպէս ահա Աֆրիկէ պիտի բաժնուի Ասիայէն, որ Պօսֆօր մը պիտի շինուի մարզու ձեռքով և Քաաիրէն մինչև Հնդկաստան երթող նաւը 9,000 քիլոմէթրը համարայ պիտի ջանի :

Մեր բարեկամներէն մէկը կը գրէ մեզ : « Այվադովսքին նոր զիրք մը հրատարակեր է ՅԱՆԵԼՈՒԱԾ անունով որու մէջ գեղեկապիւնը ամէն տողերէն կը հոսի : Յուսամ որ անպատասխանի չ'եւ թողուր այս գրութեանը եւ այլն : »

Հրապարակու կը պատասխանենք մեր բարեկամին Թէ մենք այս գրութեան տակաւին չտեսանք. եթէ արդարեւ « գեղեկապիւն կը հոսի ամէն տողերէն » մեր պարտքն է լռել. վասն զի գեղեկակերտ պատասխան տալու ատեն չ'ունինք : Զեղեկութիւնը կը գրուի դէպ զէկներու համար և Պ. Գ. Այվադովսքին բարեկամները կրնան, լիովն ազատութեամբ, վայելել դայն : Ամէն կերպ ճաշակ կը տեսնուի բնութեան մէջ. մեզուն

դէպ ի ծաղիկ կ'ուզի և հանճը՝ դէպ ի զարշահոտ ագրիւս... : Եթէ այնչափ եռանդով աղատութիւն կը խնդրենք, այն մեզի համար չ'է միշտ, այլ հաւե մեր ռիսկիւմ թշնամիներու համար. Պ. Գ. Այվադովսքին այնպէս վարուեր է մեզի հետ որ արհամարհութիւնէ ուրիշ զգացութիւն չ'էնք կրնար ունենալ իր վրայ : Իրեւ զրազէտ մեծ բան մը չ'արժէր ինքը. իրեւ վարդապետ այլ և այլ Նիկեղեցիներու՝ չ'ունի այն բարոյական իշխանութիւնը որ վարդապետի մը զիտուր փառքն է : Ընդ հակառակն իր երկդիմի վարքով եւ ծախմուտ, մանաւանդ անստոյգ բարքով ամէն համակրութիւն կուրուեր է սուտքինի մարդերու քով... :

Անտարակայս իր գրութեան մեր ձեռք պիտի իջնայ որ մը և եթէ դէպեղեկութիւնէ ուրիշ բան գտնուի հոն, կը խոտտանանք մեր արհամարհութիւնը զսպել և անկողմնադաւ կերպով քննել դայն որպէս զի ազգը օգուտ քաղէ : Իր նպատակն ալ այս է, կարծենք : Այն ժամանակ հասարակութիւնը կրնայ դատել գիտութեամբ և որոշել մեր և անոր խօսքերուն արժէքը : Վարելի է որ քննութիւնէն զայնակողութիւն ծագի. այլ ո՞վ արդեօք պիտի համարձակի զմեզ մեղադրել. միթէ բաւական չլռեցինք : Շատ երեւելի անձեր մեզ աղաչէր Լին որ անցնալը մոռնանք և անձնական կիրքերը մէկդի թողունք : Զենք կարծեր որ իրենց գիտատորութիւնն էր անոր յանգողութիւնը զրգուէլ մեր լուծեամբ, և Պ. Գ. Այվադովսքին կը հարկադրուէր աւելի համեստութիւն ունենալ այս պարագայի մէջ : Ոչ միայն այս չ'ըրաւ այլ և անգուտն բերանով և անարժան կերպով զմեզ բամբասէլէն ետեւ, հիմա կ'սկսի սպառնալ, ինչպէս կը գրէ մեր բարեկամը : Սպառնալիք... արդարեւ այս անհաւատարի կ'երեւի մեզ : Այնպէս կ'երեւակայէ ուրեմն անիկա որ մենք իրմէ կը վախճանք և զինածափ կ'ընկրկինք իր կոնտ հակառակն ատեն : Պիտի յայտնենք Թէ ոչ :

Պ. Գ. Այվադովսքին աւելի լաւ կ'ընէր Սարգիս վարդապետին դէմ գրած սոսկալի դրոյարտութիւնները յիշել և լռել... : Իր արբանեակը աւելի լաւ կ'ընէր Մատթէոս Սրբապանին (այսօր ընդ հանուր Կաթողիկոս և առաքելադատիւ Հայրապետ Հայաստանեայց Նիկեղեցայ) վրայ գրած անհիմն և անպայել խօսքերը միտքէն չ'հանել և զազունի թշնամանելէն ետքը հրապարակու երեսպաշտութիւն չ'ընել :

Պ. Գ. Այվադովսքին փոխանակ այսպէս վարուելու կ'սպառնայ, կ'ըսեն, ՅԱՆԵԼՈՒԱԾՈՒՆ մէջ : Այս սպառնալիքը իրեն կ'ուզարկենք յաւիտանով և երբ իր զիրք տուններ կարգանք, պատասխանը ետեւէն կը հասցենք, եթէ երբէք պատասխանի արժանի է այն... :

Ս. Ո.

ՄԱՆՐ ԼՈՒՐՆԵՐ.

— Առաստանգեան յարգի Գալուստը արժան սեպեր է մեղի պատասխան զրեւու Իզմիրի հայ լրագրին մէջ : Կերեւի թէ Կալին զրոծինը լաւ մը չենք ըմբռներ և տակաւին պէտք ունինք անգամագիտութիւն սովորելու : Կը խոստանանք, եթէ պարսապ ժամանակ գտնենք, բժշկական վարժարանը կրկին դառնալ և դանկերը շօշափելով մեր ուղեղին պակասութիւնը լեցունել :

Յարգի գիտունը կը սովորեցնէ մեզ թէ « միտքը ուղեղին մէջ ըլլալով, կը հարկադրինք ուղեղը քննելու և առի ալ չենք կրնար ընել բայց միայն գտնելին ձեւէն դուրսը շօշափելով : Գանկը չքննելով ուղեղը չքննուիր : Եթէ մէկը վերնայ միտնալ կը ընջուի, և ըստ գիտութեան երկուքն ալ մէկ են, այսինքն գանկարանութիւն (cranio-logie) և մտաբանութիւն (phrénologie) միեւնոյն իմաստը ունեցող կը համարուին : » Անտարակոյս մեր քաղաքա-կիցը նոր փորձեր ըրած պիտի ըլլայ որ այսպէս փտա-հոծեամբ կը խօսի. որովհետեւ « զգուշութիւն ըրինք » կ'ըսէ և կամաւ երկուքին մէկ անուն տուինք : Աւելի լաւ կ'ընէր եթէ գրէր. երեքին մէկ անուն տուինք. վասն զի անոնց քով (cranioscopie) մ'ալ կայ որուն վրայ բան մը չխօսիր : Բայց մեր ուսումնական քաղաքակիցը անով ալ չբաւականար և կը հաստատէ թէ « ընդհան-րական կերպով կը վերլուծենք » երբ գանկարանութիւնը գիտութիւն չ'է գրելու կը յանգցնինք : Ասոր ըսելիք չկայ ոչ մասնաւոր և ոչ « ընդ հանրական կերպով » : Կամ ինք կամ մենք գիտութիւն բառին դօրութիւնը չենք զի-տելք : Փրկաստիաներէ սովորեալ էինք՝ թէ գիտութիւնը կրօնք չ'է և « համոզումի » վրայ չկայանար : Փորձ և փաստ պէտք է որ պարզ ենթադրութիւն մը անմիտելի ճշմարտութիւն ըլլայ և ամէնէն ընդունուի : Բարեկամ մը մեր գանկը շօշափելով կ'երգնու որ գիտութեան սու-պատը չ'ունինք և հետեւապէս մեր ուղեղին այն կողմը կամ ճակեր է կամ կը պակսի : Չարմանալի չէ ուրեմն եթէ գանկարանութիւնը մեր միտքը չ'անէր... :

— Սարտենիայի արքայական ընտանիքը կը բաղ-կանայ հետեւեալ անձերէ : Վիկթոր-Էմմանուէլ Բ, այրի իր Առեւայիտ կիներն որ էր դքսուհի Աւստրիայի. իր հինգ դասակները, Բիէմօնի իշխանը ծնեալ 1844, մարտի 14ին, Աօսթի դուքսը ծնեալ 1845, մայիսի 30ին, Մօնթերաթի դուքսը ծնեալ 1846, յուլիսի 11ին, իշխա-նուհի Մարի-Թէրէզ-Լուիզ-Բլոթիլտը ծնեալ 1845, մարտի 2ին, իշխանուհի Մարի-Բի ծնեալ 1847, հովեմբերի 16ին : Թագաւորին եղբոր այրի կինը և իր երկու դա-ւակները որոնցմէ մէկը աղբիկ և միւսը տղայ : Այս ետքինին անունն է դուքս Փէնուայի :

Իշխանուհի Բլոթիլտը ամուսնացաւ իշխան Նաբօ-լէօնին հետ անցեալ ամսու 30ին և այս աղգականու-

թինը Եւրոպայի քաղաքաւորութիւնը բաւական վրդո-վեց : Նաբօլէօն իշխանը այսօր Ալժերիայի պաշտօնա-կալն է և Յրանսայի կայսերութեան ամենէն ազատամիտ պաշտպանը կը սեպուի : Իր վրայ երկար տեղեկութիւն պիտի տանք պաշտօնական աղբիւրէն քաղելով :

— Պարոն տը Թուլընէլը, որ տկարութեան պատ-ճառով հրաման ընդունեալ էր իր տէրութիւնէն Յրանսա գալու, փետրվարի վերջերը Պօլիս պիտի դառնայ նորէն իր պաշտօնը շարունակելու համար :

— Իզմիրի Ալապայսը իր 588 թիւին մէջ Ալեմուտրին հրատարակուիլը ազդ առնելով անոր նպատակը հա-մառօքի կը յայտնէ և կ'աւելցնէ. « Այս համարձակ դրութիւնը, որ նոր բան մըն է արեւելեան ժողովրդոց և մանաւանդ Հայոց համար, որոնք սովորած չեն ճշմարտութիւնը մերկ տեսնել և լսել, այս համարձակ դրութիւնը հետաքրքրութեամբ և մեծ ուշադրութեամբ կ'սպասենք տեսնելու թէ ինչպէս պիտի ընդունուի հա-մարակութիւնէն : Կը ճանաչենք ի վաղուտ անտի Ալե-մուտք նորահաստատ լրագրոյն գիտնական խմբագրին անկեղծ և անշահասէր բնասիրութիւնը և ազատամտու-թիւնը : Կը ճանաչենք նաեւ իր ճշմարիտ ազգասիր-րութիւնը, սակայն իմաստն ազգային յաւաքագիտու-թեան իր գաղափարները և իր կարծիքը տարբեր են ազգայնոց շատերուն գաղափարներէն և կարծիքէն : Ո՞ր դրութիւնը, ո՞ր շաւիղը աւելի օգտակար է արդեօք ազգին լուսաւորութեան և քաղաքականութեանը հա-մար : Այս խնդրոյն լուծումը անշուշտ խիստ դժուար է և ժամանակը միայն կրնայ որոշել զայն : »

Այս ժամանակը պիտի որոշէ. Ալապայսը իրաւունք ունի, այն ժամանակը պիտի յայտնէ թէ նրբան վրաս տուին մեր ազգին այն Հայերը որք կրթութեան խնդիրը հաւատքի կռիւ ըրին, որք օտարներու առջեւ և աէրու-թեան մարդերու քով քանի մը երկղիմի վարդապետներ պաշտպանեցին և ազգային խնդիրը դո՛նեցին. այն ժա-մանակը պիտի յայտնէ և կոյր Հայերը վերջապէս պիտի տեսնան որ Այվազովսիին պէս մարդ մը շահեկուն համար ինչ անձերու համակրութիւնը կորուսին հոս :

— Պօլիսէն կը գրեն թէ յարգի բժիշկ Յ. Արզումանը վախճանեալ է ծանր և երկար հիւանդութիւնէ մը ետեւ : Այս լուրը մեծ տրտմութիւն պատճառեց իր բարե-կամներու և բաղձնութիւն ծանօթներու որք լաւ գիտէին իր բարոյական և ուսումնական արժէքը : Յարգի Բժիշկ Արզումանը մեր տառնամեայ ընկեր և մտերիմ բարե-կամն էր և օտար երկրի վրայ իր սերտ համակրու-թիւնը շատ անգամ եղբայրութիւն սեպուած էր մեղի համար : Կը յուսայինք որ հայրենական օգը և ընտա-նեկան դարմանը իր հիւանդութեան առաջքը պիտի

առնէին. մեր յոյսը իղերեւ ելաւ և բարեկամ մը կորուսինք տնտեսական ժամանակ :

Յարգի բժիշկը հազիւ երեսուն տարեկան կար և իր բոլոր կրթութիւնը Բարիդի մէջ կատարեւ էր : Լատիններէն, յունարէն գիտէր և ֆրանսերէնի քաջ տեղեակ էր : Մահը չթողուց որ իր արհեստին պատիւ ընէ : Յարգի բժիշկ Արդումանը Արևիկոյն հիմնադիրներէն մէկն էր և, կրնանք ըսել, մինչև ի մահ անոր ազատութիւնը պաշտպանեց :

Ս. Ա :

— Յարգի Միքայէլ Պ. Խորասոնճեանը որ բաւական ժամանակէ ի վեր բուժական գիտութիւններու կը հետեւէր Բարիդի մէջ, մօտէրս բժիշկի վկայականը առնելով կը պատրաստուի, կ'ըսեն, հայրենիք դառնալ : Իր գրութիւնը հետեանք բայց կը լսենք թէ վարժապետները շատ զո՞հ էր և անկէ և նախագահը, Պ. Նէլաթօն, մասնաւորապէս զինքը ջնոքհատորէր է : Յարգի և ուսումնական բժիշկը միշտ խոհեմութիւն և աշխատասիրութիւն ցոյց տուեր է մայրաքաղաքին մէջ բնակելու տակ : Արևմտադարձ պատիւ կը համարի զինքը իր հիմնադիրներու մէջ հաշուել :

Շանգ Էլիզեէն անցնելու ժամանակ ամէն մարդ կրնայ տեսնել որ շատ ծառեր անկէղեւ և գրեթէ մերկ կը գտնուին ու բաւական հետաքրքրութիւն կը պատճառեն, վասն զի այս մերկութիւնը բանտորներու զործիով կը կատարուի քաղաքապետ ժողովին հրամանաւ : Արդէն բաւական ժամանակ է որ այս ժողովը գիտէր թէ Բարիդի և անոր բոլորութեան ծառերը տալուէ տարի պակսելու վրայ են և այնպիսի հիւանդութիւնով մը կը վարակուին որ չորնալով կը վերջանայ : Մինչև հիմա ասոր բուն պատճառը անյայտ էր, վասն զի տունկերու բուժական արհեստը դեռ լաւ մը ծանօթ չ'է գիտուններու և ամէն մարդ մէյմէկ զարման կ'առաջարկէր որ կ'աղղեր շատ քիչ անգամ : Վերելի թէ հիւանդութեան մահաբեր պատճառներէ մէկն է սֆոլիք (scolyte) անուն որդը որ ծառերու կեղեւին ներքև կ'սարդի և հոն պտոյտներ կը փորէ դէպ ինքկայնութիւն բաղելով միշտ : Արուն մէկ կողմէ կը փորէ, առաջ կ'երթայ և միւս կողմէ էլը այն շաղկին վրայ իր կիծերը կը սերմանէ. այնպէս որ քիչ ատենէ որդերու անթիւ բանակ մը ծառին փայտի վրայ կը դեռայ ու կ'սկսի կրծել ու ձծել ան հնարին անյազութեամբ : Շատ չ'երթար կեղեւը փայտէն կը դատուի և լայնիկէկ ասպարէզ կը շինուի հոն ամէն վտանգէ հեռու որդերուն համար : Երբ տաք օրեր կուգան, կեղեւը՝ թէ արեւին ջերմութենէ և թէ ուրիշ ժմականներու հարուածէ կը ճեղքի, կ'ընայ և սֆոլիքի բանակը կ'ապաւինի ուրիշ ծառերու վրայ իր փայտակեր կատաղութիւնը՝ շարունակելու հա-

մար : 1836ին Պարոն Ստուէն յայտնեց որ միայն Բարիդի բոլորութեւնը յիշուած հազարէ աւելի ծառայս որդերու ճարակ էղեր են : Գրեթէ նոյն ատենին Պէրլինի բուսաբաններէ մէկը զիրք մը հրատարակեց անտառի փայտակեր ժմականներու վրայ և կ'ըսուի թէ միայն Չարձի անտառը մէկ տարւոյ մէջ, մինչև հարիւր յիսուն հազար տունկ կորուսեւ է. բայց հիւսիսային Արմանիայի անտառներու որդերը Բարիդի բոլորութեւնը չ'են երեւիր և սֆոլիքի տեսակէն չ'են : Պ. Էօմէն Բոպէր որ ժամանակէ մը ի վեր այս խնդիրը քննելու հետեւէ էր և որ իր գիտերը ճեմարանին հաղորդեց, նշանակել էր որ սֆոլիքին անխնայ շոտով կը մեռնին երբ ուղղակի օդի տաքութեան ենթակայ են և երբ ծառին հիւծի առատութեւնէ կամ արտաքին հոնաւորութեւնէ կը պաշարուին : Ուսկի այս հետեւանքը հանեց որ եթէ հիւանդ ծառերու կեղեւը տաշուի՝ ոչ միայն օդին տաքութիւնը աւելի ազդու կ'ըլլայ դուրսէն ներս՝ այլ ծառին հիւծը առատալով տեսակ մը փորը ջրեղեղ կ'ընէ և դամէն կը սրբէ կը տանի : Փորձը իրաւունք տուաւ Պ. Է. Բոպէրին տեսիլներու և յոյս կայ որ զոնէ ճեմելիքի ծառերը այս կերպով պիտի դէրձ մնան փայտակերներու հարուածէ : Ահա անոր համար է որ քանի մը օրէ ի վեր բանտորները կ'աշխատին հիւանդ ծառերու կեղեւը վարակեցութեամբ տաշել : Այս թեթեւ խնդիր մը չ'է եթէ յիշելու ըլլանք որ Բարիդի հրապարակներու վրայ մէկ ծառը շատ սուղի կը նստի տէրութեան :

Ա.Զ.Դ.

Ինչպէս Արևմտադարձ ճակատաւորներ ենք, հոս ալ կրկնել արժան կը համարինք թէ՛ մեր օրագրին վերաբերեալ բոլոր խնդիրները արգոյ Գործակալներուն ձեռքով պիտի կատարուին : Իրենց աղգասիրութիւնը մեզ կատարեալ փութանութիւն կուտայ և հասարակութիւնը կրնայ ապահով ըլլալ որ անընդհատ կերպով պիտի ընդունի ամէն թիւերը : Ստորագրութեան գինը կանխիկ է և չվճարեալ նամակները կամ ուրիշ թուղթերը կը մերժուին : Ամէն ստորագրութեւն իրաւունք ունի բոլոր երաժիշտները պահանջել ձրի և Բարիդի, Պօլիսի, Իզմիրի, Եգիպտոսի հայրենասէր զորակալք պատրաստ են ամէն փոքր ի գործ դնել որ երոսպական կահոնէ չխտտորի մեր հրատարակութիւնը :

Համարատու Տըլէզր.

Ի ԲԱՐԻԶ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.